

Ա.Ս. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Վ.Բ. ՕԴԱԲԱՇՅԱՆ

**ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԽԹԱՆՈՒՄԸ
ՈՐՊԵՍ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ**

Աշխարհի մի շարք համալսարանների ռազմավարական փաստաթղթերի, ինչպես նաև այլ գրականության ուսումնասիրության հիման վրա բացահայտվում է գիտակրթական հաստատությունների դերը՝ որպես նորարարության և ինովացիոն տեխնոլոգիաների շարժիչ ուժ, հրավիրելով հայրենական նմանատիպ հաստատությունների ուշադրությունը այդ խնդրի կարևորության վրա:

Առանցքային բաներ. գիտակրթական հաստատություններ, նորարարություն, ինովացիոն տեխնոլոգիաներ, տեխնոլոգիաների խթանում:

Գիտակրթական հաստատությունները որոշակի պարտավորություն ունեն երկրի զարգացմանն ու անվտանգության ապահովմանը նպատակուղղված նորարարական հետազոտական ծրագրերի իրականացման, ինովացիոն տեխնոլոգիաների ստեղծման, տեխնիկական գիտությունների զարգացման, բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման և նրանց արտահոսքի կանխարգելման, արդի տեխնոլոգիական ենթակառուցվածքների ստեղծման, մասնագիտական խորհրդատվության տրամադրման հարցերում:

Գիտահետազոտական և ինովացիոն գործունեության համաշխարհային ասպարեզում մեծ հեղինակություն վայելող ու առաջատար դիրքեր զբաղեցնող գիտակրթական հաստատություններից շատերն առաջնորդվում են ռազմավարական մակարդակի ծրագրային փաստաթղթերով, որոնք նվիրված են նորարարության ու ինովացիոն տեխնոլոգիաների խթանմանը: Մի շարք այդպիսի փաստաթղթերի և այլ գրականության վերլուծության միջոցով բացահայտենք աշխարհի բուհերի և գիտահետազոտական հաստատությունների կողմից նորարարության ու ինովացիոն տեխնոլոգիաների խթանմանն ուղղված հիմնական դրույթները, դրանով իսկ փորձելով հրավիրել հայրենական գիտակրթական հաստատությունների ուշադրությունը նշված հարցերին:

Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, գիտատեխնիկական առաջընթացին և ինովացիոն գործունեությանն առավել նպաստող առանցքային գործոններից են ձևավորված նորարարական մշակույթը և միջավայրը: Գիտակրթական առաջատար հաստատություններում մեծ նշանակություն է տրվում ինովացիոն մշակույթի ձևավորման և պահպանման խնդրին: Օրինակ՝ Դե Մոնտֆորտի համալսարանի (Մեծ Բրիտանիա) հետազոտական և ինովացիոն ռազ-

մավարությունը նախատեսում է «դինամիկ միջավայր և հետազոտական համատարած մշակույթ, որը խրախուսում է ակադեմիական կադրերին ձեռնարկել նպատակասլաց, ինովացիոն և խստապահանջ հետազոտություններ» [1]: Նորթ-Վեսթ համալսարանը (Հվ. Աֆրիկա), որն ունի ինովացիայի համար պատասխանատու հատուկ գրասենյակ, իր հետազոտական և ինովացիոն ինստիտուցիոնալ ռազմավարությունում նշում է ինովացիոն մշակույթի բարելավումը որպես գլխավոր նպատակներից մեկը [2]:

Նորարարության ու ինովացիոն տեխնոլոգիաների խթանմանն ուղղված կարևոր գործոններից են հետազոտությունների որակը կամ հետազոտական գերազանցությունը (research excellence) և դրան հասնելուն ուղղված համապատասխան կարողությունները: Դրանց ապահովմանը վերաբերող դրույթները այնպիսի գիտակրթական հաստատությունների ինովացիոն ռազմավարական փաստաթղթերի հիմքն են, ինչպիսիք են Կարդիֆի համալսարանը (Ուելս, Մեծ Բրիտանիա), Դուբլինի Թրինիթի քոլեջը (Իռլանդիա), Օհայոյի համալսարանը (ԱՄՆ) [3-5] և այլն:

Ակնհայտ է, որ ցանկացած գիտակրթական հաստատության առաջնային դերերից մեկը երկրի տնտեսական զարգացմանը նպաստելն է: Դրա ամենամիջական եղանակներն են հետազոտական ու նորարարական արդյունքների ներդրումը, առևտրայնացումը և տեխնոլոգիաների փոխանցումը տնտեսավարողներին: Կրթություն-գիտություն-տնտեսություն կապն իր տարաբնույթ դրսևորումներով առաջնային տեղ է գրավում աշխարհի առաջատար համալսարանների առաքելություններում և ռազմավարություններում, քանի որ դա է համարվում նրանց գոյության հիմնական նպատակներից մեկը: Այսպես, Նյուֆաունդլենդի Մեմորիալ համալսարանի (Կանադա) ինովացիոն ռազմավարությունը գլխավորապես նվիրված է մտավոր սեփականության, արդյունաբերության հետ կապի, տեխնոլոգիայի փոխանցման և բիզնես-գործընթացների հետ համապատասխանության հարցերին [6]: Տեխնիոն ինստիտուտը (Իսրայելի տեխնոլոգիական ինստիտուտ), որն աշխարհին տվել է մի շարք Նոբելյան մրցանակակիրներ և համարվում է Իսրայելի գիտատեխնիկական առաջընթացի շարժիչ ուժը, մինչև 2045թ. ռազմավարության իր նախագծում նախատեսում է մասնավոր ընկերությունների է՛լ ավելի մեծամասշտաբ ներգրավում նոր կառուցվելիք տարածքների միջոցով, վերածելով դրանք ինովացիոն հանգույցների [7]:

Ինովացիան խթանելու և այն տնտեսական զարգացմանը ծառայեցնելու հարցում մեծ դերակատարում ունեն գիտակրթական հաստատություններին կից գործող տեխնոպարկերը, բարձր տեխնոլոգիաների ինկուբատորները, աքսելերացման ծրագրերը, ձեռներեցության աջակցման կենտրոնները և նմանատիպ

այլ կառուցվածքները: Թայվանում կատարված հետազոտությունները ցույց են տվել, որ այդ կառուցվածքներում գործող նորարարական ընկերություններն առավելություն ունեն մյուսների նկատմամբ, ինչը բխում է «կլաստերային էֆեկտից» և գիտահետազոտական հաստատությունների հետ կապեր ունենալու հանգամանքից [8]: Իր հերթին, Ստրեթլայդի համալսարանը (Մեծ Բրիտանիա) ռազմավարական նպատակ է համարում մեկնարկային (startup), «անջատվող» (spin-out) ընկերությունների ու ինովացիոն փոքր և միջին ձեռնարկությունների աջակցությունը: Նմանատիպ ձեռնարկություններն օգտվում են համալսարանի աքսելերացման ծրագրից, ձեռնարկության ղեկավարների վերապատրաստման հնարավորություններից, ձեռներեցության կենտրոնի խորհրդատվական ծառայություններից և այլն [9]: Իսկ Տեխասի համալսարանի Օստինի մասնաճյուղում (ԱՄՆ) գործում են տեխնոլոգիական ինկուբատոր, մեկնարկային ընկերությունների գրադարան և մեկնարկային ընկերությունների գլոբալ ծրագիր [10]:

Ժամանակակից աշխարհում նորարարական տեխնոլոգիաների ստեղծման գործընթացն անցնում է ինովացիոն ցանցում գործող շահագրգիռ տարբեր կողմերի միջև համագործակցության կամրջով: Հարկ է նշել, որ անկախ մեծությունից և գտնվելու վայրից, ուսումնասիրված գիտակրթական հաստատությունների նորարարությանը նպատակաուղղված փաստաթղթերում մեծ տեղ է տրվում ամենատարբեր մակարդակներով համագործակցությանը: Այսպես, Հյուսիսային Դակոտայի նահանգային համալսարանի (ԱՄՆ) և կից տեխնոլոգիական պարկի «Գիտահետազոտական և ինովացիոն ռազմավարության հաշվետվությունում» [11] համագործակցությունը դիտարկվում է հետևյալ հարթություններում.

- ներքին համագործակցություն՝ համալսարանի քոլեջների և ֆակուլտետների միջև,
- համագործակցություն նահանգի այլ համալսարանների հետ,
- թեմատիկ համագործակցություն ԱՄՆ համալսարանների հետ,
- համագործակցություն բիզնեսի, արդյունաբերության, սոցիալական ծառայությունների, տեղական և նահանգային իշխանությունների և համայնքային կազմակերպությունների հետ:

Փաստաթղթում կիրառվում է «գործընկերային ինտելեկտի գործակից» (Partnership IQ) հասկացությունը, որը սահմանվում է որպես կազմակերպության կառուցվածքների, անձնակազմի, քաղաքականության, տեղեկատվական գործիքակազմի, բիզնես-գործընթացների, իրազեկման մեխանիզմների և համագործակցությունների լայն տիրույթում արդյունավետորեն ներգրավվելու պատրաստական վերաբերմունքի ամբողջություն [11]:

Վարկանիշային գնահատականներով աշխարհի լավագույն 350 համալսարանների թվում ընդգրկված, իսկ վերջին 50 տարում հիմնադրվածների ցուցակում՝ 59-րդ տեղը զբաղեցնող Պլիմութի համալսարանը (Մեծ Բրիտանիա) իր գիտահետազոտական և ինովացիոն ռազմավարությունում առաջադրում է հետևյալ նպատակը. «Չարգացնել հետազոտական գործընկերություններ և համագործակցություն այլ համալսարանների և տարածաշրջանային, ազգային ու միջազգային կազմակերպությունների և բիզնեսների հետ» [12]: Իսկ Լիմերիկի համալսարանի (Իռլանդիա) «Գերազանցություն և ազդեցություն 2020» անվանումը կրող հետազոտական և ինովացիոն ռազմավարությունում չորս ստրատեգիական նպատակներից մեկը համարվում է «միջազգային ընդգրկույթի ընդլայնումը՝ համագործակցային գործընկերություններ կազմելով և հետազոտությունները տարածելով» [13]:

Այսպիսով, գիտակրթական հաստատություններն ամբողջ աշխարհում հանդես են գալիս որպես նորարարության և տեխնոլոգիական զարգացման գլխավոր շարժիչ ուժ, հանդիսանալով նորարարական գաղափարների, տեխնոլոգիաների և ձեռնարկությունների սկզբնավորման կենտրոններ, համալրելով աշխատանքի շուկան բարձրակարգ մասնագետներով և նպաստելով գիտելիքահենք տնտեսության զարգացմանը: Նորարարության և ինովացիոն տեխնոլոգիաների խթանումը՝ դրանց հարիր մշակույթի ձևավորման, համապատասխան կարողությունների կատարելագործման, տնտեսավարողների հետ փոխկապակցության ապահովման և գործընկերության լայն ցանցերի զարգացման միջոցով, այդ հաստատությունների առաջնահերթ խնդիրներից մեկն է: Հարկ է, որ ՀՀ-ում գործող բուհերը և գիտահետազոտական ինստիտուտները գերակա նշանակություն վերագրեն այս հարցերին և լծվեն վերոնշյալ խնդիրների լուծմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. De Montfort University, RESEARCH AND INNOVATION STRATEGY 2013-17, <http://www.dmu.ac.uk/documents/research-documents/research-strategy/research-and-innovation-strategy-digital-2013-17.pdf>
2. North-West University, Institutional Strategy for Research and Innovation 2008-2010, <http://www.nwu.ac.za/sites/www.nwu.ac.za/files/files/i-research-support/ResearchLinkdocs/SetswanaPDFs/ResearchandInnovationStrategy.pdf>
3. Research, Innovation and Enterprise, Cardiff University, THE WAY FORWARD 2012-2017, <http://www.cardiff.ac.uk/plann/resources/research-innovation-and-enterprise.pdf>
4. Trinity College Dublin, Strategy for Innovation and Entrepreneurship http://www.heai.ie/sites/default/files/tcd_6_appendix_4_strategy_for_innovation_and_entrepreneurship.pdf

5. Ohio University Innovation Strategy, An Interim Report August 2014, <https://www.ohio.edu/research/upload/OHIO-InnovStrat-InterimReport-EKA-8-15-14.pdf>
6. An Innovation Strategy for Memorial University of Newfoundland, https://www.mun.ca/research/about/Memorials_Innovation_Strategy.pdf
7. Technion Israel Institute of Technology, TechCity21: Strategic Master Plan Until 2045, <http://abat.net.technion.ac.il/files/2013/02/TechCity21.pdf>
8. **Yang C.-H., Motohashi K., Chen J.-R.** Are new technology-based firms located on science parks really more innovative?: Evidence from Taiwan // Research Policy. – 2009.-Vol. 38, No. 1. – P. 77–85.
9. University of Strathclyde Glasgow, Strategy for Innovation, https://www.strath.ac.uk/media/1newwebsite/documents/Innovation_Strategy_2015.pdf
10. Austin Technology Incubator, <http://ati.utexas.edu/>; ATI Startup Library, <https://wikis.utexas.edu/display/asul/Home>; Global Startup Program <http://utenportugal.org/global-startup-program/>
11. North Dakota State University, Research and Innovation Strategy report <https://www.ndsu.edu/fileadmin/president/pdf/NDSUPhase1Report052114.pdf>
12. Plymouth University, Research and Innovation Strategy https://www.plymouth.ac.uk/uploads/production/document/path/1/1664/576624_Research_and_Innovation_Strategy_A5_20150716.pdf
13. EXCELLENCE & IMPACT 2020, Research & Innovation Strategy for the University of Limerick, http://www.ul.ie/research/sites/default/files/UL_ExcurrenceImpact2020.pdf

А.С. ТАДЕВОСЯН, В.Б. ОДАБАШЯН

СТИМУЛИРОВАНИЕ НОВАТОРСТВА И ИННОВАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ КАК ПЕРВОСТЕПЕННАЯ ЗАДАЧА НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЙ

Основываясь на изучении стратегических документов ряда университетов мира, а также другой литературы, выявляется роль научно-образовательных учреждений в качестве движущей силы новаторства и инновационных технологий. Акцентируется внимание подобных отечественных учреждений на важность данного вопроса.

Ключевые слова: научно-образовательные учреждения, новаторство, инновационные технологии, стимулирование технологий.

A.S. TADEVOSYAN, V.B. ODABASHIAN

**STIMULATION OF INNOVATIONS AND INNOVATIVE
TECHNOLOGIES AS A PRIMARY OBJECTIVE OF SCIENTIFIC-
EDUCATIONAL INSTITUTIONS**

Based on a review of strategic documents of a number of universities in the world, as well as other literature, the role of scientific-educational institutions as a driving force of innovation and innovative technologies is revealed, thus inviting the attention of similar Armenian institutions to the importance of this issue.

Keywords: scientific-educational institutions, innovation, innovative technologies, technology stimulation.

UDC 005.342:314.96

L.A. HAYRAPETYAN, A.M.A.R. NUNES, K.M. KHACHATRYAN

**FACTORS THAT INFLUENCE THE ENTREPRENEURSHIP ACTIVITIES
BY GENDER IN THE EUROPEAN UNION**

This research work is aimed at discussing the gender issue concerning entrepreneurship in the European Union countries in a period of nine years, from 2007 to 2015, identifying the factors which drive individuals, especially women, to be entrepreneurs. In order to explore the entrepreneurial activity across a set of developed countries, the econometric methodology of the panel data is applied to a data set of entrepreneurial statistical indicators calculated and made available by the Global Entrepreneurship Monitor.

Keywords: entrepreneurship, gender, European Union, Global Entrepreneurship Monitor (GEM), panel data methods.

Introduction. In the latest decades, the importance of the entrepreneurial activity has been highlighted in many research works. The entrepreneurship has been found as a vehicle for economic growth and innovation, job creation and career opportunity [1]–[5], regardless of gender.

As men, women created ventures for personal freedom, independence, job satisfaction and/or security [6], however literature has mentioned that they do not start the same types of businesses. In the discussion of the factors that may influence the entrepreneurial activity, scholars have defined the importance and influence of socio-cultural factors such as the fear of failure, the perceived capabilities and opportunities and the role models [7]–[9]. Fear of failure has been defined as an important deterrent for new business creation mainly in case of women [10]–[14], [9], [15]. Simultaneously, perceived capabilities are considered as a crucial step for achieving business success. Various studies have shown that